ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026թ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

Քաջարան համայնքի ղեկավար՝

Մ. Փարամազյան

Հաստատված է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանու 2025թ. հունիսի 25 N 64-Ա որոշմամբ:

ՔԱՋԱՐԱՆ 2025

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2026թ բնապահպանական ծրագրի առաջնայնությունները սահմանել ենք՝

առաջնորդվելով Քաջարան համայնքի զարգացման 2023-2027 թթ ծրագրի դրույթնե րով,

ի նկատի ունենալով Կայուն զարգացման 2030 օրակարգի նպատակները

համոզված լինելով, որ համայնքի կայուն զարգացումը էապես կախված է բնապահպանական և առողջապահական խնդիրների լուծումից,

գիտակցելով հասարակության առողջության պահպանման առաջնահերթությունը

կարևորելով բնապահպանական ծրագրերի շարունակականությունը, ամբողջականությունն ու փոխկապակցվածությունը :

ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենք :
2. ՀՀ կառավարության «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկից մասհանվող գումարների հաշվին իրականացվող բնապահպանական ծրագրերի մշակման կարգը սահմանելու մասին» 04.09. 2023թ N 310-Ն որոշում:
3. ՀՀ կառավարության «Բնապահպանական ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները կամ դրանց փոփոխությունները շրջակա միջավայրի ոլորտի եվ առողջապահության ոլորտի լիազոր մարմինների հետ համաձայնեցման կարգը սահմանելու եվ ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 26-ի № 1544-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 24.08. 2023թ № 1421-Ն որոշում:
4. ՀՀ կառավարության «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին եվ տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 30.10.2008թ № 1318-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 08.02.2018 թվականի №108-Ն որոշում:
5. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք :
6. Քաջարան համայնքի զարգացման 2023-2027 թթ հնգամյա ծրագիր:

ԾՐԱԳՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ՝

- ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ԴԱՐՁՆԵԼ ՆԵՐԱՌԱԿԱՆ, ԴԻՄԱԿԱՅՈՒՆ, ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՂ
- ԱՊԱՀՈՎԵԼ ՈՐԱԿՅԱԼ ԷԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՔԻ ԲՈԼՈՐ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ 1 ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՍԱՆԵԼԻ ԱՊԱՀՈՎ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՏՉԵԼԻ, ԿԱՆԱՉ ՀԱՆՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խնդիր 1. Վերականգնել համայնքի բնակավայրերի կանաչ հանրային տարածքները

Միջոցառում 1. Քաջարան քաղաքի Տերյան 3 և Տերյան 4 բազմաբնակարան շենքերի բակային հատվածում պուրակի վերականգնում

- **Իրավիճակի նկարագրություն և ծրագրի անհրաժեշտությունը**

Կանաչ տնկարկները կարևոր գործոն են հանդիսանում քաղաքի բնակիչների կյանքի համար էկոլոգիական, միկրոկլիմայական, սանիտարահիգիենիկ լավագույն պայմանների ստեղծման, քաղաքի կուլտուրական լանդշաֆտի ձևավորման գործում:

Քաջարան քաղաքի համար, որպես լեռնահանքային արդյունաբերության խոշոր կենտրոնի, առանձնակի է կարևորվում կանաչ տնկարկների դերն ու նշանակությունը: Քաջարան քաղաքի կանաչապատման մակարդակը չի համապատասխանում ՀՀ կառավարության 08.02.2018թ թիվ 108-Ն որոշմամբ հաստատված բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և կազմությանը ներկայացվող պահանջներին, մասնավորապես՝ ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների տարածքը մեկ բնակչի հաշվով կազմում է 1.2 մ^2, մոտ 7 անգամ փոքր է սահմանված նորմայից:

Կանաչ տնկարկների սանիտարահիգիենիկ դերը՝ որպես վնասակար գազերից, ծխից և հատկապես փոշուց ու աղմուկից պաշտպանվելու միջոց, թույլ է դրսևորվում արտադրական և բնակելի կառուցապատված հատվածների միջև կանաչ պաշտպանիչ գոտու բացակայության, ճանապարհների ու փողոցների թույլ կանաչապատվածության պատճառով:

Հաշվի առնելով քաղաքի կառուցապատված հատվածի տարածքի փոքրությունը և հետագա ընդլայնման հնարավորությունների բացակայությունը, բարդ ռելիեֆը, առաջնային են դառնում առկա կանաչ տնկարկների (հատկապես՝ ընդհանուր օգտագործման) պահպանումն ու վերականգնումը, քաղաքի էկոլոգիական պայմանների

բարելավման գործում դրանց դերի ու նշանակության, դրանք ըստ իրենց գործառնական նշանակության օգտագործման հնարավորությունների մեծացումը:

Վերականգնման ենթակա տարածքի մակերեցը 550 մ² է, գտնվում է Քաջարան քաղաքի կառուցապատված հատվածում, Տերյան 3 և Տերյան 4 բազմաբնակարան բնակելի շենքերի միջև: Տարածքը նախկինում ևս պուրակ է եղել: Առկա կահավորանքը անօգտագործելի վիճակում է, անցուղիներն ու հենապատերը քայքայված վիճակում, կանաչ հատվածը չորացած, ծառերն (հիմնականում բարդի) ու թփերը ծերացած, մեծամասամբ չորացած ու վերականգնման ոչ ենթակա: Տարածքը իր ֆունկցիոնալ նշանակությանը չի ծառայում, դառել է փոշու առաջացման ու աղբի կուտակման վայր:

- **Ծրագրով նախատեսվող գործողություններ.**
  1. Համաշինարարական աշխատանքներ, այդ թվում՝
     1. Սալվածքների, մայթերի և հատակների իրականացում
        - Բնական քարից - 100 մ²
        - Ասֆալտբետոնից – 34 մ²
        - բազալտե եզրաքար – 137 գմ
        - ռետինե հատակ – 85մ²
     2. Հենապատերի երեսապատում ՝ 94մ²
     3. Աստիճանների նորոգում երեսապատմամբ – 14 մ²
     4. Բազրիքների կառուցում – 38 գմ
     5. Տաղավարի վերանորոգում
     6. Արտաքին լուսավորություն
        - Հենասյուն – 11հատ
        - LED լուսատու՝ հենասյան - 22 հատ
          հողի մեջ - 10
     7. Կանաչապատում – 250 մ²
        նստարան - 4 հատ, աղբաման - 3 հատ
- **Ակնկալվող արդյունքները՝**

1. Համայնքի կանաչ տնկարկների ընդլայնում:
2. Մթնոլորտային օդի փոշով աղտոտվածության նվազում:
3. Նպաստավոր և անվտանգ պայմաններ հանգստի, ժամանցի, բնակիչների զբաղվածության համար:
4. Բարեկարգ բնակության քաղաքային միջավայր:
5. Քաղաքում կանանց և երեխաների, տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց համար հասանելի ապահով, ներառական և մատչելի, կանաչ և հանրային տարածքների մասնաբաժնի ավելացում,

- **Ծրագրի շահառուները**

Ծրագրի ուղղակի շահառուներն են՝

ա) Տերյան 1,2,3,4 բազմաբնակարան բնակելի շենքերի բնակիչները (550 մարդ),

բ) տարածքում գործունեություն իրականացնող բազմաթիվ տնտեսվարող սուբյեկտները և նրանց ծառայություններից օգտվող համայքի բնակիչներն ու հյուրերը. բարեկարգ միջավայրը նպաստում է գործարարության զարգացմանը:

Անուղղակի շահառուներն են՝

ա) սանիտարական մաքրման ծառայություններ իրականացնողները. կչեզոքացվի աղբով և ավելվախքներով տարածքի երկրորդային աղտոտման աղբյուր,
բ) համայնքապետարանը՝ բնակության միջավայրից բնակչության գոհունակության առումով,

- **Կապը այլ ծրագրերի հետ**

ա) ՀՀ կառավարության 2021-2026թթ ծրագիր
բ) Քաջարան համայնքի զարգացման 2023-2027թթ ծրագիր
գ) ՀՀ Սյունիքի մարզի 2017-2025 թ. զարգացման ռազմավարություն

գ) Ծրագիրը ուղղակի առնչություն ունի Կայուն Զարգացման 2030 օրակարգով սահմանված նպատակների, թիրախների ու ցուցանիշների հետ.

Նպատակ 11 Քաղաքները եվ մարդկային բնակավայրերը դարձնել ներառական, դիմակայուն, անվտանգ եվ կայուն

Թիրախ 11.7 Մինչև 2030թ. համընդհանուր կերպով հասանելի դարձնել ապահով, ներառական և մատչելի, կանաչ և հանրային տարածքներ, մասնավորապես՝ կանանց և երեխաների, տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց համար

Ցուցանիշ 11.7.1 Քաղաքների կառուցապատված տարածքների միջին բաժնեմասը, որը հանրային օգտագործման նպատակով բաց տարածք է բոլորի համար՝ ըստ սեռի, տարիքի և հաշմանդամություն ունենալու հանգամանքի

- **Ծրագրի արժեքը՝ 41 024,2 հազ դրամ**

- **Համաֆինանսավորում**

Մասնավոր հատված
Նախագծանածահաշվային փաստաթղթերը ձեռք է բերվել ԶՊՄԿ ՓԲԸ կողմից և նվիրաբերվել Քաջարան համայնքին
Համայնք
Նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ 90,0 հազ. դրամ

Հիմնախնդիր 2. ՄԱՏՈՒՑՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՉ ԲԱՎԱՐԱՐ ՄԱԿԱՐԴԱԿ

Խնդիր 1. Համայնքի բժշկական կենտրոնի կարողությունների զարգացում

Համայնքի բնակչությանը Քաջարանի բժշկական կենտրոնի կողմից մատուցվող բժշկական ծառայությունների որակը բարձրացնելու, ծառայությունների սպեկտրը ընդլայնելու և մատչելի ու հասանելի դարձնելու նպատակով համայնքապետարանը Ծրագրի շրջանակներում պարբերաբար տեխնիկական աջակցություն է ցուցաբերում բժշկական կենտրոնին:

Աջակցության անհրաժեշտ ուղղություններն ու ձևերը քննարկվում են բժշկական կենտրոնի ղեկավարության և աշխատակիցների հետ:

- **Գործողություն.**

Բժշկական սարքավորումների ձեռք բերում.

ա) *Չորացնող ախտահանող պահարան*
բ) *Հիվանդանոցային պատգարակ*
գ) *Մանկական էլեկտրոնային կշեռք, մինչև 20կգ*
դ) *Վիրաբուժական LED լուսարձակ*
ե) *Գինեկոլոգիական բազկաթոռ*
զ) *Լապարասկոպիկ վիրաբուժության գործիքների լրակազմ (լապարասկոպ, արտածծիչ, մկրատ, դիսեկտոր,ասաեղնաբռնիչ, ասեղ, տրոկար, հերնիոստեպլեր)*

- **Ակնկալվող արդյունքները**

1. մատուցվող բժշկական ծառայությունների ընդլայնում
2. մատուցվող բժշկական ծառայությունների որակի բարձրացում
3. տեղում բուժսպասարկում ստացողների թվի ավելացում
4. լիարժեք կդրսևորվեն բժիշկների ունակություններն ու հմտությունները

- **Ծրագրի շահառուները**

1. համայնքի բոլոր բնակիչները
2. Քաջարանի բժշկական կենտրոն դիմող այլ համայնքների բնակիչները
3. Բժշկական կենտրոնի բուժանձնակազմը:

- **Ծրագրի արժեքը՝ 3700,0 հազ ՀՀ դրամ**

Շրջ. միջավայրի պահպանության, գյուղատնտ.,
տնտեսական զարգացման և ծրագրերի բաժնի պետ՝ Գ. Գաբրիելյան

Հաստատված է ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանու 2025թ. հունիսի 25 N 64-Ա որոշմամբ

Համայնքի ղեկավար Մ. Փարամազյան

25.06.2025թ

ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Քանակը	ԳՈՒՄԱՐԸ հազ.դրամ	ծանոթություն
1	**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ**		**41 024,2**	Կից ներկայացվում ենք նախագծանախահաշվային փաստաթղթերը:
1.1	**Քաջարան քաղաքի Տերյան 3 և Տերյան 4 բազմաբնակարան շենքերի բակային հատվածում պուրակի վերականգնում, այդ թվում**	Ըստ նախագծի	**41024,2**	
	Շինարարական աշխատանքներ		*39987,69*	
	Տեխնիկական հսկողության ծառայություն		*797,34*	
	Հեղինակային հսկողության ծառայություն		*239,17*	
2	**ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ**		**3700,0**	Անհրաժեշտ սարքավորումների ցանկը ներկայացրել է Քաջարանի բժշկական կենտրոնը: Սարքավորումների գները սահմանվել են գնահարցման և ներքին շուկայի ուսումնասիրության արդյունքներով:
2.1	**Բժշկական սարքերի ձեռք բերում**		**3700,0**	
	- *Զորացնող ախտահանող պահարան*	1 հատ	450,0	
	- *Հիվանդանոցային պատգարակ*	1 հատ	400,0	
	- *Մանկական էլեկտրոնային կշեռք, մինչև 20կգ*	1 հատ	150,0	
	- *Վիրաբուժական LED լուսարձակ*	1 հատ	300,0	
	- *Գինեկոլոգիական բազկաթոռ*	1 հատ	400,0	
	- *Լապարասկոպիկ վիրաբուժության գործիքների լրակազմ (լապարասկոպ, արտածծիչ, մկրատ, դիսեկտոր,ասաեղնաբռնիչ, ասեղ, տրոկար, հերնիոստեպլեր)*	լրակազմ	2000,0	
	ԸՆԴՀԱՆՈՒՐ		**44 724,2**	

Շրջ. միջավայրի պահպանության, գյուղատնտեսության, տնտեսական զարգացման և ծրագրերի բաժնի պետ՝ Գ. Գաբրիելյան

Համաձայնեցված է

ՀՀ շրջակա միջավայրի նախարար

_____ Հ. Սիմիդյան

_____ _____ 2026թ

Հավելված
Քաջարան համայնքի
2026 թվականի բնապահպանական
ծրագրի

ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

NN ը/կ	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՈՒՄԱՐԸ (հազ. դրամ)
1.	**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ**	**41 024,2**
1.1.	*Քաջարան քաղաքի Տերյան 3 և Տերյան 4 բազմաբնակարան շենքերի բակային հատվածում պուրակի վերականգնում*	*41 024,2*
.....		
2.	**ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ**	**3700,0**
2.1.	Բժշկական սարքերի ձեռք բերում,*այդ թվում*	3700,0
	- *Չորացնող ախտահանող պահարան*	450,0
	- *Հիվանդանոցային պատգարակ*	400,0
	- *Մանկական էլեկտրոնային կշեռք, մինչև 20կգ*	150,0
	- *Վիրաբուժական LED լուսարձակ*	300,0
	- *Գինեկոլոգիական բազկաթոռ*	400,0
	- *Լապարասկոպիկ վիրաբուժության գործիքների լրակազմ (լապարասկոպ, արտածծիչ, մկրատ, դիսեկտոր,ասաեղնաբռնիչ, ասեղ, տրոկար, հերնիոստեպլեր)*	2000,0
ԸՆԴԱՄԵՆԸ՝		**44 724,2**